

ԱՆՆԱ ՀԱԿՈՔՋԱՆՅԱՆ¹

*Երևանի պետական համալսարան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ**

Մասնագետների պահանջարկի ձևավորմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը ներառում է խնդրի բավարար լուծման այնպիսի մեթոդների ու գործիքակազմի կիրառում, որի արդյունքում կբարձրանա տնտեսության մրցունակությունը: Մրցունակության բարձրացման առանցքային հիմնախնդիրներից մեկը՝ մասնագիտական կրթության այնպիսի համակարգի գործադրումն է, որն ուղղված կլինի ճյուղային, աշխատաշուկայի և զբաղվածության մասնագիտական ոլորտների կառուցվածքային բարելավումներին:

Հիմնաբառեր. տնտեսության մրցունակություն, աշխատանքի արտադրողականություն, մասնագիտական կրթություն, պետական պատվերի համակարգ:


Տնտեսությունների կառուցվածքների փոփոխությունները նպատակամղվում են երաշխավորված կայուն ու բարձր տեմպերով տնտեսական աճ ունենալուն: Հայաստանի համար նախընտրելի կառուցվածքը պետք է բավարարի բազմաչափանիշային մի շարք պահանջների՝ բարձր արտադրողականության, քիչ նյութաէներգատարողության, արտահանման հակվածության և այլն: Բազմաչափանիշային այդ պահանջներն ու դրանցով ձևավորվող սահմանափակումներն առավել սուր դրսևորվում են Հայաստանի Հանրապետությունում՝ նկատի առնելով մասնակի ցամաքային շրջափակման գործոնը: Տնտեսության կառուցվածքային փոփոխությունները հանգեցնում են նաև զբաղվածության համապատասխան կառուցվածքի ձևավորման, որն, իր հերթին, պահանջում է որոշակի համամասնությունների ապահովում՝ տնտեսության, աշխատաշուկայի և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների միջև[4]: Բավարար պայմանների դեպքում վերջիններս կնպաստեն տնտեսության կառուցվածքին համապատասխանեցված զբաղվածության մասնագիտական կառուցվածքի ձևավորմանը: Շուկայական տնտեսություն ձևավորող երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, վերոնշյալ կառուցվածքների միջև անհամապատասխանություններն ունեն դրսևորման գրեթե համանման օրինաչափություններ: Միջազգային տնտեսական

¹ annahakobjanyan@ysu.am

ինտեգրման և գլոբալացման գործընթացներին ներգրավվելն ուղղակիորեն պայմանավորված է մրցունակ տնտեսություն ունենալու հետ, որը հասանելի է արդյունավետ կառուցվածքային քաղաքականության իրագործման արդյունքում: Նշված հիմնախնդրի լուծման կարևոր նախապայմաններից է **միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում մասնագետների նկատմամբ պահանջարկի կանխատեսումը**: Նման գործընթացը հնարավորություն կընձեռի ապագա սովորողներին կողմնորոշել դեպի աշխատաշուկայի առավել մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները, ամրապնդել կրթական համակարգ-աշխատաշուկա կապը, իսկ պետությանը՝ ընտրել ճիշտ առաջնահերթություններ՝ մասնագետների պատրաստման պետական քաղաքականություն մշակելիս:

Ակնհայտ է, որ արդյունավետ զբաղվածության նպատակադրմամբ, ՀՀ տնտեսությունում զբաղվածության բազմազանեցման քաղաքականություն չի տարվում, ինչը պայմանավորված է նաև գործող օրենսդրության բացթողումներով: Մասնավորաբար, գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության բարձր ցուցանիշը (ավելի քան 35%) և ՀՆԱ-ում գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան երկու անգամ ցածր տեսակարար կշիռը վկայությունն է աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման և որպես հետևանք ցածր հատույցի:


ՀՀ աշխատանքի շուկայում առկա է մեծ անհամապատասխանություն աշխատանքի առաջարկի և պահանջարկի միջև: Մյուս կողմից, խիստ ցածր է աշխատանքի արտադրողականությունը: Մասնավորապես, զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությունում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների 35.3%-ը, մինչդեռ զարգացած երկրներում բարձր արտադրողականությամբ զբաղվածների թվաքանակը չի գերազանցում 5%-ը: Զարգացած երկրների զբաղվածության կառուցվածքների դինամիկան վկայում է, որ զբաղվածների թվում մեծ տեսակարար կշիռ են կազմում ծառայությունների և գիտական հետազոտությունների ոլորտներում զբաղվածները: ՀՀ-ում զբաղված բնակչության բաշխումն ըստ տնտեսական գործունեության տեսակների արտահայտվում է հետևյալ օրինաչափություններով (տե՛ս **Գծապատկեր 1**).



**Գծապատկեր 1. ՀՀ զբաղվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի
2011-2015թթ. (հազ. մարդ) [2, էջ 61-62]**

Տվյալները փաստում են, որ վերջին մեկուկես տասնամյակում կառուցվածքային տեղաշարժերի արդյունքում արդյունաբերության ոլորտից դուրս մնացած աշխատուժի կլանումը տեղի է ունեցել ոչ թե ծառայությունների կամ այլ ոլորտների, այլ գյուղատնտեսության կողմից: Սակայն, նման ցուցանիշն արդյունք է ոչ թե այն հանգամանքի, որ երկրում գյուղատնտեսության ոլորտն արդյունավետ զարգանում է և ապահովում զբաղվածության բարձր մակարդակ, այլ հետևանք գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության հաշվարկման մեթոդիկայի անկատարության, համաձայն որի զբաղված են համարվում գյուղացիական տնտեսությունների աշխատունակ տարիքի այն անդամները, ովքեր օգտվել են հողի սեփականաշնորհման իրավունքից:

Նախորդ գծապատկերում զբաղվածության բաշխման վերաբերյալ տվյալների հետ համադրության նկատառումով դիտարկենք նաև ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը (տե՛ս **Գծապատկեր 2**):




Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը 2011-2015 թթ. (մլրդ. դրամ) [2, էջ 59-60, 254]

Դիտարկելով ՀՆԱ-ի ճյուղային բաշխվածությունը՝ կարելի է եզրահանգել, որ տնտեսության ճյուղային կառուցվածքն ունի բարելավման կարիք, քանզի նման կառուցվածքի դեպքում ցածր է արտադրողականությունը և տնտեսական արդյունավետությունը: Այդ մասին են վկայում ստորև բերված գծապատկերի տվյալները¹ (տե՛ս **Գծապատկեր 3**):

Ուսումնասիրելով ՀՆԱ-ի և զբաղվածության միտումները՝ կարելի է տեսնել, որ ՀՀ ՀՆԱ-ի ընդամենը մեկ քառորդը ՀՀ տնտեսությունում ստեղծվում է զբաղվածների գրեթե կեսի կողմից: Հետևաբար, կարելի է փաստել գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի գերցածր արտադրողականության մասին [2], որը շարունակական բնույթ է կրում:

¹ ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման անհրաժեշտությունը կարող էր դիտարկվել նաև կապիտալի (արտադրական հզորությունների տարածքային տեղաբաշխման առումով: Սակայն, կարևորագույն այդ խնդիրները և դրանց բավարար լուծումները, որոնք կնպաստեին ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը՝ ինքնուրույն հետազոտության առարկա են:




Գծապատկեր 3. Աշխատանքի արտադրողականությունը ՀՀ-ում՝ ըստ տնտեսության ճյուղերի (հազ. դրամ) [6]

Արտադրողականությունը, որ սահմանում է պաշարների օգտագործման արդյունավետությունը, երկրի մրցունակության անկյունաքարն է: Ուստի մրցունակության մարտահրավերն ունի երկու համալուծ բաղկացուցիչ՝ արտադրողականության բարձրացման և տնտեսության ցանկալի կառուցվածքին համապատասխան աշխատատեղերի ստեղծման մարտահրավերներ: Առաջադրված մոտեցումները ենթադրում են տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի այնպիսի փոփոխություններ, որոնց արդյունքում, մի կողմից, կապահովվի առավել բարձր արտադրողականություն, մյուս կողմից՝ կնախանշվեն ցանկալի կամ մրցունակ կառուցվածքին հասնելու մեթոդներն ու գործիքակազմը:

Պետական սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր գործոն է պետության կողմից իրականացվող կառուցվածքային քաղաքականությունը: Կառուցվածքային քաղաքականությունն անհրաժեշտ է իրականացնել երեք հիմնական ուղղություններով՝

- ✓ տնտեսության ճյուղային կառուցվածք,
- ✓ աշխատաշուկայի կառուցվածք,
- ✓ զբաղվածության մասնագիտական կառուցվածք:



Գծապատկեր 4. Կառուցվածքային քաղաքականության մշակման գործընթացը¹

Այս ձևաչափով նպատակահարմար է իրականացնել ինչպես առանձին, այնպես էլ փոխազդեցության հնարավոր կառուցակարգերի վերլուծություններ, որը պահանջում է համապատասխան գործիքակազմի ընտրություն: Կառուցվածքային քաղաքականության գլխավոր խնդիրն է այդ գործիքների ճիշտ ընտրությունը, հնարավոր արդյունքների կանխատեսումը և տարբեր գործիքների միաժամանակ գործածության անհրաժեշտությունը (տե՛ս **Գծապատկեր 4**):

Կարելի է փաստել, որ Հայաստանում մարդկային ռեսուրսների ներգրավման հարաբերական մակարդակը չի համապատասխանում գիտելիքահենք տնտեսության պահանջներին: 2017 թ. ազգային մրցունակության զեկույցում կատարված դիտարկումների շրջանակներում, որպես մարդկային ռեսուրսների գնահատման համեմատական ցուցանիշներ ընտրվել են բնագիտական և ճարտարագիտական առարկաների գծով շրջանավարտների տեսակարար կշիռները: Հայաստանում մտահոգության պատճառ է ճարտարագիտական ուղղությամբ շրջանավարտների համեմատաբար ցածր տեսակարար կշիռը՝ 2010թ.-ի դրությամբ 8.8% [5, էջ 67-68]: Արդյունաբերության թուլացող դերն ու նշանակությունը

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

նվազեցնում են ճարտարագիտական բազմաթիվ առարկաների գրավ-
չությունն ու արդիականությունը, որն արտացոլվում է հասարակության
մեջ մասնագիտական ընտրության առաջնահերթություններում: Այս
միտմանը հակակշռում է բնական գիտությունների գծով շրջանավարտ-
ների համեմատաբար մեծ տեսակարար կշիռը՝ 2015-ի դրությամբ 8.2%
[5, էջ 69]: Այս ցուցանիշով Հայաստանն առաջ է համեմատական վերլու-
ծության համար ընտրված երկրների մեծամասնությունից, ինչը բավա-
րար հիմքեր կարող է ստեղծել ավելի հիմնարար գիտելիք պահանջող
կարողությունների զարգացման համար:

Ընդհանուր առմամբ, պետական պատվերի և տնտեսության կա-
ռուցվածքը պետք է գտնվեն փոխհամապատասխանության վիճակնե-
րում, տնտեսության ցանկալի կառուցվածքը պետք է կանխորոշվի նաև
մասնագետների պատրաստմամբ: Վերոնշյալ գծապատկերում առա-
ջարկվող գործիքակազմից կարևորագույններից մեկը ՀՀ բուհերին
հատկացվող բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի
ու դոկտորանտուրայի կրթական ծրագրերով անվճար ուսուցման տեղե-
րի բաշխումն է, որն ուղղակիորեն ազդում է տնտեսության մասնագիտա-
կան և աշխատաշուկայի կառուցվածքների, իսկ միջնորդավորված՝ նաև
ճյուղային կառուցվածքի վրա:

Ստորև բերված է ՀՀ բուհերին հատկացված բակալավրի կրթական
ծրագրով անվճար ուսուցման տեղերի կառուցվածքը՝ ըստ մասնագիտա-
ցումների 2011-2015 թթ. համար (տե՛ս **Աղյուսակ 1**):

Դիտարկելով պետական պատվերի ցուցանիշների միտումներն ըստ
մասնագիտությունների՝ տրամաբանական է թվում տնտեսագիտության
ոլորտում պետական պատվերի կրճատումը, որը պայմանավորված է
ոլորտի նկատմամբ դիմորդների հետաքրքրվածությամբ և, որպես հետ-
ևանք, որակյալ կադրերի առկայություն՝ առանց պետական ռեսուրսների
ծախսի: Միևնույն ժամանակ, բավականին մեծ տեսակարար կշիռ է
կազմում արվեստը և հումանիտար գիտությունները համատեղ՝ շուրջ
35%: Աշխատաշուկայում առավել մեծ պահանջարկ ունեցող մասնագի-
տությունների ընդլայնման միտումը, ինչը հատկապես բնորոշ է բարձրա-
գույն կրթության ոչ պետական հատվածին, բացասաբար է անդրադառ-
նում աշխատաշուկայի հավասարակշռության վրա՝ ստեղծելով որոշ
մասնագիտությունների գծով կադրերի ավելցուկ և մյուսների գծով՝ պա-
կասուրդ:

Աղյուսակ 1

ՀՀ բուհերին հատկացված բակալավրի կրթական ծրագրով անվճար ուսուցման տեղերի կառուցվածքը՝ ըստ մասնագիտացումների 2011-2015 թթ.(%) [7]

ԿՈՂ	ԱՆՎԱՆՈՒՄ	2011	2012	2013	2014	2015
1	Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ	10.73	10.58	10.96	12.83	12.96
2	Բնագիտական գիտություններ	6.31	6.49	5.60	5.18	5.18
3	Հումանիտար գիտություններ	20.19	20.09	21.03	20.61	20.48
5	Կրթություն	4.73	4.72	4.60	4.61	3.86
6	Առողջապահություն	4.23	4.22	4.53	4.17	4.17
7	Մշակույթ և արվեստ	13.50	14.11	14.36	14.48	14.79
8	Տնտեսագիտություն և կառավարում	13.44	9.32	8.82	6.89	6.95
9	Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ	1.96	1.57	1.64	2.15	2.21
12	Էներգետիկա, և էլեկտրատեխնիկա	3.85	3.09	2.96	2.84	2.65
13	Մետալուրգիա, նյութագիտություն և մեքենաշինություն	0.95	2.52	2.52	2.47	2.40
14	Տրանսպորտային համակարգեր	2.21	1.89	1.45	1.45	1.45
16	Էլեկտրոնային տեխնիկա, ռադիոտեխնիկական կապ	1.45	3.40	3.27	3.48	3.48
17	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	2.40	2.02	2.14	2.59	2.59
18	Ճարտարապետություն և շինարարություն	2.90	2.83	2.58	2.84	3.10
19	Գյուղատնտեսություն	7.63	7.37	7.49	7.40	7.40
20	Այլ	3.54	5.81	3.91	6.76	6.31
	Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ակնհայտ է, որ տնտեսական զարգացման յուրաքանչյուր փուլին համապատասխանում է զբաղվածության որոշակի կառուցվածք: Տնտեսական զարգացման միջազգային փորձը վկայում է. որքան հավասարակշռված են տնտեսության, զբաղվածության և աշխատաշուկայի կառուցվածքները, այնքան հավասարաշուկա ու կայուն է տնտեսությունը, բարձր են աշխատանքի արտադրողականությունը և մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետությունը [3]: Զբաղվածության օպտիմալ կառուցվածքի ձևավորումն իրագործելի է միայն վերոնշյալ օրինաչափության ապահովման դեպքում: Խնդրի լուծման թիրախը՝ զբաղվածության մասնագիտական կառուցվածքի փոփոխությունների կանխատեսումներն են և աշխատաշուկայի իրավիճակային վերլուծությունները:

Այսպիսով.

➤ Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը համակարգելու և աշխատաշուկայի զարգացումներին արձագանքելու նկատառումով՝ անհրաժեշտ է համագործակցության ձևաչափ սահմանել կրթական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, գործատուների և աշխատանքի շուկան կարգավորող կառուցակարգերի միջև: Ձևավորված իրավիճակում առաջարկվում է հնավորություններ ստեղծել տեսանելի

ապագայի համար կանխատեսելու զբաղվածության դինամիկան՝ ըստ մասնագիտությունների: Առաջնահերթ լուծում պահանջող խնդիր է դառնում պետական պատվերի ձևավորման ինստիտուտի և տնտեսության կառուցվածքի միջև առկա անհամապատասխանությունների հնարավորինս մեղմացմանը: Առանձնակի կարևորություն է ստանում մասնագիտական կրթությանը ներկայացվող որակական պահանջների սահմանումը:

➤ ՀՀ կառավարության կողմից առաջիկա հինգ տարիների կտրվածքով ներկայացված ծրագրի կենսագործման անհրաժեշտ պայմաններից մեկը՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների բնութագրիչների առկայությունն է, որոնց պարագայում հնարավոր կլինի առարկայնորեն ամրագրել կրթահամակարգի տարբեր մակարդակներում մասնագետների պատրաստման հարցերը:

➤ Մասնագետ կադրերի պետպատվերի ձևավորման և դրանց իրագործման երաշխիքները հանդիսանում են կառուցվածքային քաղաքականության մշակման գործընթացի տարրերն իրենց ներհատուկ տնտեսաիրավական կարգավորումներով, որոնց վերաբերյալ առկա է գիտագործնական լուծումների պահանջը:

➤ Հաշվի առնելով ՀՀ տնտեսությունում սոցիալական լարվածությունը՝ նպատակահարմար ենք համարում մասնագետների պատրաստման պետական պատվերի համակարգում ներառել նաև սոցիալական բաղադրիչը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Սարգսյան Ն.**, Աշխատանքի արտադրողականության հիմնահարցը կառուցվածքային տեղաշարժերի համատեքստում, Տարեգիրք 2011, տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 343-344:

2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 59-60, 61-62, 254:

3. **Саргсян Г., Геворгян Р., Саргсян Н.**, Четырехфакторная модель структурных изменений на рынке труда переходных экономик, Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 351-353:

4. **Chenery H., Robinson S., Syrquin M.**, Industrialization and growth, A Comparative Study Published for the World Bank, Oxford University Press, 2000, p. 8-10.

5. **NATIONAL COMPETITIVENESS REPORT OF ARMENIA**, Our Role in the Fourth Industrial Revolution, EV Consulting, Economy and Values Research Center, p.67-70.

6. [www.armstat.am /am/?nid=586&year=2016](http://www.armstat.am/am/?nid=586&year=2016)

7. [www.edu.am /index.php/am/documents/index/101](http://www.edu.am/index.php/am/documents/index/101)

АННА АКОПДЖАНЫАН

*Ереванский государственный университет
кандидат экономических наук, доцент*

ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ СПРОСА НА СПЕЦИАЛИСТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Экономическая политика, направленная на формирование спроса на специалистов, предполагает применение таких методов и такого инструментария, в результате которого повысится конкурентоспособность экономики. Одной из ключевых проблем повышения конкурентоспособности, является внедрение такой системы государственного заказа в сфере высшего профессионального образования, которая будет направлена на совершенствование отраслевой структуры экономики, структуры рынка труда и профессиональной структуры занятости.

Ключевые слова: конкурентоспособность экономики, производительность труда, профессиональное образование, система государственного заказа.

ANNA HAKOBYANYAN

*Yerevan State University
PhD, Associate Professor*

FORMATION ISSUES OF SPESIALISTS' DIMAND IN THE REPUBLIC OF ARMENIA

Economic politics directed to the formation issues of specialists' demand includes usage of such methods to the solution of problem in the result of which competitiveness of the economy will increase. One of the key issues of increasing the competitiveness is the application of such system in the state order of professional education which will be directed to the structural improverments of sectoral, labor market and employment in professional sectors.

Keywords: competitiveness of economy, productivity of work, professional education, state order.

Ներկայացվել է խմբագրություն 25.07.2017